Ազգայնականի նախագահ Հայտար Ալիբեի առողջարան վիճակին վերաբերող մեծագոյն անդամադարձ կ'ունենան երկրի կացութեան, եւ յատկապէս՝ օտար ներդրողներու մասնակցութեամբ գործադրուող տնտեսական ծրագիրներուն վրայ: Ռուսական «Նեգա-վիսիմայա կազմութեան» թերթին համաձայն, միջազգային ֆինանսական ընկերութիւնները եւ գրամատուները այսօր փորձաքարի կը գարնեն Պաքուի ուժն ու դիմացկունութիւնը: Այսպէս, Ազգայնականի համար կենսական նկատուող Պաքու - Թիֆլիս - Ճէյհան քարիւղի արտածման խողովակին կառուցման ֆինանսաւորումը յետաձգուած է այս տարուան աշնան: Նախագիծի համակարգող Պրիթիլ Փեթրովիւմ - Ազգայնական ընկերութեան նախագահ Տէյփիտ Ուուտուրտ չէ բացատրած, որ

TANIA TRAVEL
Sodeco Square - Rue Damas
Tel: (01) 616555 (pbx) - Fax: (01) 616551
Rue Sidjani - Face cinema Jeanne d'Arc
Tel: (01) 739682 (pbx) - Fax: (01) 340473
Website: http://www.taniatravel.com

CHARTERS ARMENIE
Programme avec Tours (7 et 8 jours)

ATHENES
RHODOS, MYKONOS, CORFU & CRETE
Croisières vers les îles Grecques

RHODES
(8 jours)
Départ tous les Mardis à partir du 15/07

PARIS+COTE D'AZUR
Avion + Grand choix d'Hôtels en B/B
Possibilité d'extension à Lourdes, Eurodisney etc.

ITALIE (du Nord au Sud)
10 Programmes différents (8 à 15 jours)

AUTRICHE
Différents programmes, Hôtels, Tours.

ESPAGNE, PORTUGAL et MAROC (Villes Impériales)
10 Programmes différents (8 à 18 jours)

EGYPTE
Le Caire & Croisière sur le Nil-Luxor & Assouan
Sharm el Sheikh, Hurghada, Alexandrie

CIRCUIT TUNISIE
Sousse & Hammamet

MALAISIE & THAILANDE
Différents programmes (Tours organisés)

POSSIBILITES DE CREDIT
Jbel-Dib: 710305/87 Jourmeih: 913746-934465
Bikfaya: 982040 Kaebl: 218821/213321
Jbel: 942744/943388 Zahle: 806947/802592
Saïda: 730870/736870 Tripoli: 627755/602469
Amoun: 930075

ԿՈՒՉՈՒԻ

• Ոսկերիչ (սեւտեր) գործաւորներ, 6 տարուան փորձառութեամբ, դիմելի են. 03-605593 առաւօտեան 8:30-17:00:

Orientplus
HARBOR TRAVEL & TOURISM
Touch New Worlds

Farna
\$319

8 days - Direct Charter Flight
Every Tuesday starting from 8 July

Other Destinations
Bonai Trip to Cyprus 3 Days Cyprus & Greece
\$190 \$425

All prices are in US Dollars. Visa required. Insurance included.

BOOK THIS WEEK AND GET 15% DISCOUNT ASS FOR OUR FREE CREDIT FACILITY
01.900598, 901598
03.258336, 256254
www.orientplus.com

T.S. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ Ի ՊԱՏՈՒԻ

Ա.- Լիբանանի կառավարութեան թիւ 478 որոշմամբ, պետական պաշտօններու համար նախապատուութիւն պիտի տրուի B.T. եւ T.S. վկայեալներուն,
Բ.- Մեծ ընկերութիւններ իրենց ծանուցումներով կը նախընտրեն Պէյրութի ամերիկեան եւ ֆրանսական համալսարաններէն կամ T.S.ով վկայեալները:

ՓՕԼԻԿԼՈՒ ՔՈԼԷԾ
Կը շնորհաւորէ իր B.T. եւ T.S. շրջանաւարտները եւ իր T.S. վկայականներով կը կանգնի հսկաներու շարքին:

ՓՕԼԻԿԼՈՒ ՔՈԼԷԾ.- Տոբա՛ հեռ. 01/251320

«ԱՉՂԱԿ» Ի
ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱՉՂԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել
հետեւեալ թիւերուն. - 258526, 260115 եւ 241274:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

ԽՐԻՄԱՀԱՅ ԳԱՂԹՕՃԱԽԸ ԺԷ. ԴԱՐՈՒՆ

ՀԱՅԵՐ ԴԵՐԱԿԱՏԱՐ ԴԻԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Նրիմի Հայկական գաղութը, որ ժե. դարու վերջապատում մեծապես տկարացած էր, վերաշխուժացավ ժ. դարուն, եւ այնուհետեւ, յատկապէս ժ. դարուն խրիմահայեր քաղաքական ու դիւանագիտական կարեւոր յանձնարարութիւններ ստանձնեցին, մեծ դեր խաղալով խրիմի եւ Ռուսիոյ միջեւ յարաբերութիւններու զարգացման մէջ:

ԼԵՀԱՀԱՅ ԳԵՐԻՆԵՐ ԽՐԻՄԻ ՄԷՋ

Նրիմի եւ շրջակայքի թաթար ցեղախումբեր յաճախ կը յարձակէին Լեհաստանի սահմաններէն ներս, կողոպտչական արշաւանքներ կը կազմակերպէին, կ'աւերէին շէն բնակավայրեր, կը ջարդէին, կը կողտորէին եւ մեծ թիւով գերիներ վերցնելով կը հեռանային: Այս արշաւանքներուն պատճառով մեծապէս կը տուժէին լեհահայերը, որոնցմէ մեծ թիւով գերիներ կը տարւէին Նրիմի:

Լեհաստանի Հայկական բանակավայրերուն վրայ յայտնի մեծ արշաւանք մը կազմակերպուեցաւ 1621ին, ուրկէ իսլամ Գրիգէյ խան մեծ

ըղուցիներ կազմակերպեց եւ ձեռնադրութիւններ կատարեց:

Նոյն տարին, 1650ին, հոգեւոր ծառայութեան համար Նրիմ ուղարկուեցաւ Յովհաննէս վարդապետ:

ՄՈՒՐԱՏ ԴԻԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴ

Նրիմի Հայութեան երեւելի դէմքերէն էր Մուրատ, որ տեւական յարաբերութիւն ունէր թէ՛ Նրիմի խանական ընտանիքին եւ թէ՛ Մոսկուայի արքունիքին հետ եւ մեծ հեղինակութիւն կը վայելէր. այդ պատճառով ալ Մեհմէտ խան Գրիգէյ անոր վստահած էր Ալեքսի ցարին հետ յարաբերութիւններու կարգաւորման եւ բանակցութիւններու պարտականութիւնը:

Մոսկուայի մէջ դիւանագիտական բանակցութեան մը միջոցին, 1656ին, Մուրատ անարգական վերաբերմունք եւ արտայայտութիւններ ունեցաւ ցարին հասցէին. սակայն ցարը, նկատի ունենալով անոր բարձր հեղինակութիւնը, չհամարձակեցաւ պատժել զայն եւ ուղարկեց Նրիմ, խանէն խնդրելով մահապատիժի ենթարկել զայն:

Իր կարգին Մեհմէտ խան 1656 Դեկտեմբերին քննութիւն բացաւ հարցին շուրջ, որ տեւեց մինչեւ 1658 Յունիս, մէկուկէս տարի: Հակառակ ցարի կամքին Մեհմէտ խան մերժեց զայն մահապատիժի ենթարկել եւ ազատ արձակեց:

Այս առիթով, 26 Յունիս 1658ին խանը գրեց ցարին. «Դուք գրած էիք հայուն (Մուրատի) մասին եւ մենք հրամայած էինք այդ հայ հոգիին զին կանգնի մեր առջեւը. եւ հարցաքննեցինք զայն եւ ան հայիոյնու իր մեղքը չընդունեց, իսկ մեր օրէնքով ով իր մեղքը չընդունի եւ լացի դեռ չկան երկու վկաներ, զայն մահապատիժի ենթարկել արգիլուած է: Եւ մենք անոր նկատմամբ զայն չգործադրեցինք»:

ՄՈՒՐԱՆՅՈՒ ՄԱՆՍՈՒՐՈՎ

Նրիմահայ անուանի քաղաքական գործիչ, վաճառական եւ դիւանագիտական ներկայացուցիչ էր Մուրախովո (Նիկոլայովսկի Նիկոլայով) Մանսուրով, որ տիրական դերակատարութիւն ունեցաւ Նրիմի եւ ընդհանուր առմամբ Օսմանեան կայսրութեան եւ Ռուսիոյ միջեւ յարաբերութիւններու զարգացման մէջ:

Ռուսիա այս ժամանակ, Ալեքսի ցարին մականին տակ բաւական զօրացած էր: Ութնամիս 1654ին միացաւ Ռուսական կայսրութեան: Այնուհետեւ ծայր առաւ Շուշէտի հետ պատերազմը, Պալմիրե ծովու ափերուն վրայ գերիշխանութեան հաստատման համար: Ութնամիս անիշխանական վիճակէն մտահոգ ցարը 1661ին վերջ տուաւ Շուշէտի հետ պատերազմին: Ութնամիս մէջ նոր իրավիճակ ստեղծուեցաւ 1664ին, երբ Պետրոս Տորոչէնքօ, շրջանին ղեկավարը, ինքզինք օսմանցիներու հովանաւորութեան տակ դարաւ: Թուրքեր գինուորական արշաւանքի ձեռնարկեցին, ահազանգի մատնելով Լեհաստանն ու Ռուսիան: Տոնի կողակները եւ Վոլկայի գիւղացիները Սթեփան Լազարի գլխաւորութեամբ պատասխանեցան. միտամանակ կողակներ լայնածաւալ յարձակումներու ձեռնարկեցին դէպի Սեւ եւ Ազովի ծովերու ափերը:

Քաղաքական այս վիճակին մէջ Ազովի Սիւլէյման փաշան 1669ին առաջարկեց Մուրախովո Մանսուրովի բանակցութեան մէջ մտնել ուսուական արքունիքին հետ եւ զգուշութեան հրահրելով ցարը, Տոնի կողակներուն ձեռնարկած յարձակումներուն եւ թուրք-թաթար շրջաններուն պատճառած վնասներուն նկատմամբ:

Մոսկուա ճամբար ելլելէ առաջ Մուրախովո Մանսուրով իր ընկերներ Եակիմ Պաղտասարովի եւ Սիմոն Իվանովի հետ միասնաբար 235 ուրբի փրկագին վճարելով ազատ արձակելու տուաւ թուրքերուն կողմէ գերեզմարուած ուսուչորս վաճառականներ Սաւա Պուրով, Գրիգոր Տրոյով, Իվաչքօ Ռատիսնով եւ եւ Վասկա Սիմիոնով, որոնք իր հետ առնելով իր ընկերներ Եակիմի եւ Սիմոնի հետ մեկնեցաւ Ռուսիա:

Մանսուրով 1669 Օգոստոսին հասաւ Մոսկուա եւ բանակցութեան մէջ մտաւ արքունիքին հետ, եւ ամէն աշխատանք տարաւ իրականացնելու համար իր վրայ դրուած յոյսերը: Ան փորձեց համոզել ուսուչորս, որ պէտք է արքունիքը ճնշում բանեցնէ կողակներուն վրայ թուրքերուն դէմ յարձակումները դադարեցնելու համար: Մանսուրով յայտարարեց, որ օսմանեան սուլթանը Ազովի փաշային գրած է, որ ինք կը փափաքէ ցարին հետ տեւական խաղաղութիւն եւ բարեկամութիւն պահպանել եւ հարց տուած է թէ փաշան ինչո՞ւ հակադրուած է կողակներուն: Փաշան սուլթանին պատասխանած է, որ մեղաւորները կողակներն են, որոնք խուճարով կը մտնեն ծով եւ վնասներ կը հասցնեն իրենց: Ատիկա գիտելու նաեւ Նրիմի խանը, եւ այդ հարցով դեպիտան ուղարկած է Մոսկուա: Մանսուրով աւելցուց, որ կողակներու եւ խալիվներու յարձակումները մեծ վնասներ կը պատճառեն Նրիմի եւ Ազովի շրջաններուն:

Մանսուրով միտամանակ արքունիքին առաջարկեց իր փրկագինն եւ Մոսկուա բերած ուսուչորս վաճառականներուն փոխարէն ազատ արձակել չորս խրիմացիներ: Սակայն ցարը մերժեց եւ փոխարէնը Մանսուրովի առաջարկեց իր տուած փրկագինին փոխարէն սամոյրի մորթ տալ: Իր կարգին Մանսուրով չհամաձայնեցաւ տրուելիք մորթի քանակին շուրջ եւ մերժեց ստանալ զայն:

Մանսուրովի բռնած դիրքին վրայ ցարը հրամայեց հեռացնել զայն, եւ 1669ին Հոկտեմբերի վերջաւորութեան կամ Նոյեմբերի սկիզբը Մանսուրով իրեն ընկերակից Եակիմ Պաղտասարով եւ Սիմոն Իվանովի հետ, թարգմանիչ Վասիլի Գրիգորեւի առաջնորդութեամբ ճամբու դրուեցան դէպի Ազով: Բայց ճամբան, Սոլոմենսքի շրջանի Դուրնովօ գիւղին մէջ Վասիլի Գրիգորեւի դանակի հարուածով մը սպաննեց Մանսուրովը:

Ցարը, իմանալով Մանսուրովի մահուան լուրը, որ կրնար բացասական ազդեցութիւն ունենալ թուրքերու եւ թաթարներու հետ իր յարաբերութիւններուն վրայ, հրամայեց անմիջապէս Եակիմ եւ Սիմոն Մոսկուա վերադարձնել եւ քննութիւն բանակ հարցին շուրջ: Պետական եւ քաղաքական յայտնի գործիչներ Օրտին Նաչչուկին, Գերասիմ Դոխտուրով եւ Լուկիան Կոլոսով ստանձնեցին հարցին հետապնդումը:

Եակիմ Պաղտասարով եւ Սիմոն Իվանով իրենց կարգին պահանջեցին Մանսուրովի փրկագինն եւ իրենց հետ Մոսկուա բերած ուսուչորս գերիներուն համար հատուցում ստանալ: Ի վերջոյ ցարին հրամանով բաւարարութիւն տրուեցաւ անոնց:

ԱԶԻՐՈՒ ԵՒ ՅԱԿՈՒԲ ԵԱԿՈՎԼԵՒԵ

Նրիմահայ երեւելի վաճառականներ էին Ազիրոյ եւ Յակոբ Եակովլեւ, որոնք սերտ կապեր ունէին Ռուսիոյ հետ եւ կարեւոր դեր ունեցան ուսուչորսներու ազատ արձակման աշխատանքներուն մէջ:



Կաֆայի Ս. Գաբրիէլ եւ Ս. Սիբայի Հրեշտակապետաց եկեղեցին

Ազիրոյ 1669ին թաթարներ Նրիմի եւ Ազովի մէջ առեւտուր կատարող ուսուչորսական կալուածատէրեր եւ վաճառականներ գերի բռնած էին: Ազիրոյ եւ Յակոբ Եակովլեւ 1870ին բանակցութեան մէջ մտան թաթար երեւելիներուն հետ եւ մեծագումար փրկագին վճարելով յաջողեցան ազատ արձակել տալ զանոնք: Անոնցմէ Անտոնի Տիւրչով գերի ինկած էր Նրիմի գահաժառանգ եւ բանակի հրամանատար Ղալա սուլթանին ձեռք-ղաղա սուլթան 300 ուրբի պարտք ունէր Ազիրոյի, որուն դիմաց անոր յանձնեց Անտոնի Տիւրչովը: Իսկ Յակոբ Եակովլեւ փրկագին Սիմոն Անտոնիւր, Ֆիլատ Ֆոմինը, Իվան Ֆիրսովը, Սիմոն Կիրիլովը եւ Տիմոն Կիրիլովը:

Հայ վաճառականները փրկագին վճարելով ստորագրութիւն առին ուսուչորսականներէն, յետոյ զայն Մոսկուայի մէջ վերստանալու պայմանով: Հայ վաճառականները այսպէսով քաղաքական, առեւտրական եւ նաեւ ուսուական առաքարութեան վստահութիւնը շահելու եւ առանձնաշնորհումներ ստանալու հաշիւներ կը հետապնդէին:

ԱՌԵՏՐԱԿԱՆ ԼԱՅՆՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹԻՒՆ

Նրիմահայ առեւտրականներուն գործունէութիւնը ժե. դարուն կեդրոնացած էր գլխաւորաբար Լիովի վրայ. անոնցմէ շատեր Լիովի, Եսեւ Լեհաստանի տարբեր շրջաններուն, ինչպէս նաեւ Թրանսիլվանիոյ մէջ առեւտրական կեդրոններ եւ գործակալներ ունէին: Ռուսիոյ հետ առեւտուրը եւս գլխաւորաբար Լեհաստանի վրայով կը կատարուէր: Նրիմահայեր Լիովի շրջանին եւ Արեւելի միջեւ գլխաւոր կապն էին Նչենք, որ այս ժամանակ առեւտուրը ցամաքի ճամբով կը կատարուէր, որովհետեւ օսմանցիք, որոնք կը հակակռէին նեղուցները եւ գերակռութիւն ունէին Սեւ ծովուն վրայ, արդեւներ հաստատած էին նաւազնացութեան



Կաֆայի (Թեոդոսիա) հայոց Սուրբ Գեորգ եկեղեցին

Թիւով Հայեր գերեզմարեց եւ ճամբայ հանեց դէպի Նրիմ: Մինչ այդ վրայ հասաւ ցուրտն ու ձիւնը եւ սառնամանիքը, եւ շատ մը գերիներ ու զինուորներ մահացան ճանապարհին. բազմաթիւ կառքեր ու երկվարներ մնացին ճամբուն վրայ. ընկերներ գիրար ձգեցին, ծառաներ՝ իրենց տէրերը, եւ մեծ քանակութեամբ ապրանք ու գանձեր կորսուեցան:

Նմանօրինակ մեծ արշաւանք մըն ալ կազմակերպուեցաւ 1645 - 1650ին. թաթարներ հասան Պար քաղաքը, որուն տէրը եւ կալիքիոյ լեհական ուժերու հրամանատարը՝ Միքայիլ Փոթոցի, անոր զաւակները, մերձակորները, ծառաները եւ քաղաքի Հայութեան մէկ մասը գերեզմարուեցան Նրիմ եւ Կաֆայի, Հարասուպագարի, Պախչիսարայի, Կեզլովի եւ Օրինբերանի մէջ բնակեցուցան: Նրիմահայեր հաւաքուեցան եւ երեք հարիւր Հայ գերիներուն համար փրկագին վճարելով ազատ արձակել տուին զանոնք:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՈՒՐԻՍԿԱՆԵՐ

Նրիմի Հայութեան զգալի բնակեցնական կեանքը վերակազմելու նպատակով 1650ի ձմեռն



Խաչքար Կաֆայի Սուրբ Սարգիս եկեղեցւոյ մէջ

էջմիածինէն Կաֆա ուղարկուեցաւ Գարրիէլ վարդապետ: Ան շրջեցաւ Նրիմի Հայաբնակ գիւղերն ու քաղաքները՝ Կաֆա, Հարասուպագար, Պախչիսարայ եւ այլ վայրեր, կրօնական արա-

Նրիմի հայոց Սուրբ Խաչ վանքին գմբէթը

վրայ: Նրիմահայ վաճառականները կարաւաններ կը կազմէին եւ Լիովի վրայ արեւելեան ապրանքներու առեւտուր կը կատարէին: Անոնց կարաւանային ուղեւորութիւններուն կը մասնակցէին լեհ վաճառականներ՝ Լիովին ու Քրաքովին եւ գերեզմարի վաճառականներ՝ Քէօլին եւ Նիւրեմպէրկէն:

Կաֆա կը մնար Հայ վաճառականներուն օրրանը եւ կեդրոնը. տոմիւնիքեան միաբան էմիրոյ Տորթեի տ'Ասքըլի Կաֆայի մասին արձանագրած է. «Կաֆան հարուստ է միտով, գինիով, թռչուններով, ձուկով, կաթնամթերքով եւ միրգերով, իսկ ձմեռն՝ ածուխով ու փայտով: Թաթարական դարպասներով ամեն օր քաղաք կը մտնեն 500, 600, 900 եւ մինչեւ հազար սայլեր, իսկ երեկոյեան անցնում են մեկուկ վրայ վաճառելու համար ոչինչ կը մնայ»:

Նրիմահայ վաճառականները իրենց առանձին կիւրքերը ունէին, որոնց վրայ արձանագրուած էին իւրաքանչիւրի անուան սկզբնատառերը՝ հայերէն, ռուսերէն, յատիներէն եւ արաբերէն տառերով:

Կաֆա հակառակ դարաւոր վերիվայրումներուն կը մնար Հայկական հոծ բնակչութեամբ քաղաք՝ իր 24 եկեղեցիներով եւ 23 զանազաներով: Ժե. դարու ճանապարհորդ Շարթեյի վկայութեամբ այդ ժամանակ քաղաքը 800 տուն քրիստոնեայ բնակչութիւն ունէր, որուն մեծամասնութիւնը Հայեր էին: Հետագայ տարիներու ստեղծման 1200 Հայ ընտանիքներ կը բնակէին հոն: Նչենք, քաղաքին անմիջապէս մօտակայքը, անոր արուարձանը նկատուող Քաչոտ թաղամասը զուտ Հայաբնակ էր:

ՂԱՐԱՍՈՒՊԱՋԱՐ

Օսմանեան տիրապետութեան ժամանակաշրջանին Նրիմի Հայկական գլխաւոր բնակավայրերին դարձաւ Հարասու գետի ափին գտնուող Հարասուպագարը, ուր բաւական Հայութիւն կեդրոնացաւ: Հարասուպագարի Հայերը առանձին թաղամաս ունէին, որ կը կոչուէր Հարասուպագար. Հայաբնակ այլ թաղամաս մըն ալ կազմուեցաւ իր թաթարական մզկիթին մօտակայքը: Երկու թաղամասերուն միջեւ կը գտնուէր Միսնա վարդապետի եւ Սուլթանի մեծ կամուրջը, որ 5 Յուլիս 1631ի ջրհեղեղին պատճառով փուլ եկաւ:

Հայ վաճառականներուն շնորհիւ Հարասուպագար առեւտրական կարեւոր կեդրոնի վերածուեցաւ. այն աստիճան, որ Հարասուպագարի շուկան դարձաւ Նրիմի տեղական ապրանքներու վաճառման ամէնէն մեծ ու ընդարձակ կեդրոնը: Նրիմի տեղական արտադրութիւններ՝ բրդեղէն, կաշի, հացահատիկ եւ այլն Հարասուպագարի շուկայէն կը փոխադրուէին Կաֆայի եւ Եւպատորիայի նաւահանգիստները, ուրկէ առաքատանաւերով կը տարուէին Պոլիս եւ կովկասեան շուկաներ:

Հայ վաճառականներ Ռուսիայէն կը ներածէին գլխաւորաբար մորթեղէն, Պոլիսէն եւ այլ վայրերէ՝ բուժիչ խոտեր, թանկագին քարեր, հայելիներ եւ այլն. ներածուած այդ ապրանքներուն մէկ կարեւոր մասը Հարասուպագար կը բերուէին, ուր կը վաճառուէին կամ կ'արտահանուէին այլ երկրներ:

Հարասուպագարի գաղթօճախը ստուարացաւ ժե. դարուն, երբ թրքական հալածանքներու պատճառով շատ մը ընտանիքներ հոն հաստատուեցան: Սուլթանը, նկատի ունենալով Հայերուն կեդրոնացումը Հարասուպագարը եւ վերադարձնել հոն հաստատուած Հայերը, խանը իր կարգին պատասխանեց սուլթանին, որ Հայեր հոն հաստատուած են Կաֆայի փաշային հալածանքներուն եւ բռնութիւններուն պատճառով, եւ թելադրեց որ փաշան աւելի մեղմ վարուի իր հպատակներուն հետ: Այն ամեն Կաֆա կը վերադառնան ոչ միայն փառաշինքի հպատակները, այլև խանի շատ մը հպատակներ, որովհետեւ Կաֆան ծովամերձ հարուստ քաղաք է», աւելցուց խանը:

Haigazian University
 Admission and Enrollment
 Fall 2003 - 2004

Now Accepting Applications!
 Undergraduate and Graduate Studies
 BA, BS, Teaching Diploma, MA & MBA

Haigazian University - Kantari, Hamra
 Tel.: 01-349230/1, 01-353010/1
 E-mail: admissions@haigazian.edu.lb
 Or visit us at: www.haigazian.edu.lb

Valuing Higher Education

DAY WATER
 Մասնավորապես դրոշմաբեկ
 ստանդարտներով գնումի
 պարագային: Կազմակերպված 13 S.
 Հասցե: Կարմիր խճուղի, համար
 յարոնի քիմիկատներ:

RECOMMENDED FOR BABIES

Clean & Safe Water
 Under Hygienic Condition
 NATURAL - PURELIGHT - LOW IN SODIUM

Free delivery
 19 Lit. @ 2000L.L.

Mr. Jim Keushkerian
 owner
DAY WATER, Tel.: 03/435298

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»-ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնակալ թուղթի վրայ, եւ՝ հաստատութեան) ներկայացնել «Ազդակ»-ի ծանուցումներու գրասենեակը:

www.aztagdaily.com

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5506
 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- | | |
|---|---|
| <p>ՇՈՐԻՉՈՒԱԿԱՆ</p> <ol style="list-style-type: none"> Ֆիլմաշխարհի մրցանակներէն (երկու բառ): Տխրելու, չընդունելու ձամբայ: Բեռնակիր անասուն - Պարտեսակ: Երկնատուր - Ածականակերտ մասնիկ: Վնաս - Պատու: Արեւնակից ազգական մը - Գնացք: Կրկնուած բաղաձայններ - Մանրակծծի: Նոր աշխարհ - Տեսանելի: Ռամկաբեկ՝ աշուճ - Հայոց Դ. ամիսը - Շաղկապ: Իզական «նա» - Դեղին պղինձ: Որձակ - Չուս, գողար: | <p>ՈՒՂԱՇԱՅԵՍ</p> <ol style="list-style-type: none"> Չտուած կարգաձօշան: Տեղական մակբայ - Ապուշուրթիւն կամ Հիացում: Տեղեկաբեր - Կանացի օտար շարաթաթերթ: Տեքստիլ: Մտերմական - Փոխադարձ դերանուն: Յուցական ածական - Յարգարժ: Հեծկտուր - Տխտական մասնիկ: Արական անուն - Փտուրթիւն: Գամ - Գնայուն: Առեւելի, սարսփելի - Այրուբենէն: Հաւատացեալ ժողովուրդ - Փխրուն: |
|---|---|

ԹԻՒ 5505

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
2	3	4	5	6	7	8	9	10	11	
3	4	5	6	7	8	9	10	11		
4	5	6	7	8	9	10	11			
5	6	7	8	9	10	11				
6	7	8	9	10	11					
7	8	9	10	11						
8	9	10	11							
9	10	11								
10	11									
11										

Հ. Բ. Ը. Մ.
ՄԵԼԳՈՆԵՍԻ ԿՐԹԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ
ՍՈՒՏՔԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ
ՆՈՐ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ՀՄԱՐ

Բոլոր այն ուսանողները, որոնք կը փափաքին յաճախել Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, պարտին մուտքի բնութիւն տալ, յառաջիկայ Հինգշաբթի 7 Օգոստոս 2003, կէսօրէ առաջ ժամը 9:00ին, Հ. Բ. Ը. Մ. Ս. «Տեմիրճեան» կեդրոնին մէջ, 3րդ յարկ, Անթիլիաս:

Մանրամասնութեանց համար կրնաք դիմել Հ. Բ. Ը. Մ. Ս. գրասենեակ.
 Հ. Բ. Ը. Մ. Տեմիրճեան կեդրոն, Անթիլիաս. հեռ. 04/522842-3

ՍԱԿԱՐԱՆ

Պէշրուօի սակարահին մէջ օտար դրամահիշներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկի	32,35 - 32,45	լ.ն.
Իրաքեան տիւար	4850,00 - 4860,00	լ.ն.
Քուեյթեան տիւար	5032,00 - 5057,00	լ.ն.
Յորդանանեան տիւար	2121,00 - 2131,00	լ.ն.
Պահրէյնեան տիւար	3985,00 - 4010,00	լ.ն.
Ա. Մ. Էմիրութեանց տիրիւս	410,75 - 412,75	լ.ն.
Քարաբեան ռիւալ	413,75 - 415,75	լ.ն.
Սէւտական ռիւալ	402,00 - 404,00	լ.ն.
Օմանեան ռիւալ	3895,00 - 3920,00	լ.ն.
Եգիպտական կիւն	249,00 - 259,00	լ.ն.
Անգլիական քերիլին	2508,00 - 2518,00	լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1152,00 - 1157,00	լ.ն.
Թրքական լիրա	104,00 - 104,50	լ.ն.
Կիպրական փաուս	3015,00 - 3040,00	լ.ն.
Ճապոնական հապար եփ	12,70 - 12,80	լ.ն.
Արիւսական հապար ֆրանք	13,25 - 13,30	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00	լ.ն.
Քանադական տոլար	1113,00 - 1118,00	լ.ն.
Աւստրալիական տոլար	995,00 - 1000,00	լ.ն.
Եւրօ	1780,00 - 1790,00	լ.ն.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	142,000 - 147,000	լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	127,500 - 132,500	լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	118,000 - 123,000	լ.ն.
Մեքսիկական փէսոս	678,000 - 698,000	լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	17,685,000 - 17,885,000	լ.ն.
Մէկ օսն ոսկի	367,00 - 367,50	\$
Մէկ օսն արծաթ	4,50 - 4,52	\$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրօ	1.1806 - 1.1813
Քանադական տոլար	1.3515 - 1.3525
Չուիցերիական ֆրանք	1.3076 - 1.3086
Ճապոնական եփ	117.93 - 118.03
Մէկ սրիլիլին	1.6649 - 1.6659

Մէկ դրամ
 560 դրամ

● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱՇՆԵԹՈՒՂԹԵՐ

Գիւնի Ա. ճշդում Գիւնի Բ. ճշդում

Ա. կարգ	4 6/8	4 7/8
Բ. կարգ	5	5

ԼՈՒՍԱՅԱԾՈՒ ԱՆԵՋԱՆԵԱՆ ՀԵՈ. 01-252852

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

ԽՈՑ (21 Մարտին 20 Ապրիլ)
 Եթէ առեւտրով կը զբաղիք, ջանացեք աւելցնել ձեր գործունեութեան դրամագլուխը, կամ հետեւեցեք արդիական ձեւերու, որպէսզի յաջողիք:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
 Ձեր ընկերոջ, գործընկերոջ կամ ձեր կողակիցին հետ ձեր տուած որոշումը կամ ձեր կատարած ծրագիրը շատ կարճատեւ պիտի ըլլայ: Մտածեցեք այլ ձեւի մը մասին եւս:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)
 Տրամադրութեան անկում մը, կորովի նուազում մը պիտի պաշարեք ձեզ, պիտի ունենաք յոռի, յոռեսես մտածումներ: Դիմեցեք ձեր բարեկամներուն, որպէսզի ձեր տրամադրութիւնը փոխուի քիչ մը:

ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)
 Ձեր գերզգայնութիւնը գէշ դեր պիտի խաղայ օրուան ձեր տրամադրութիւնը խանգարելու: Ձեր շուրջիները պիտի անտեսէ ձեր վերաբերումը եւ թերեւս արգահատի ձեզի նկատմամբ: Ուրեմն եղեք բնական:

ԱՌԻԻՄ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
 Ձեր ընտանեկան յարկին տակ կ'ունենաք տիրապետողի վերաբերում, բայց ուշադիր եղեք արտաքին ձեր կեանքին, ձեր շրջապատին եւ անոնց նկատմամբ մի ունենաք բռնակալի կեցուածք: Եղեք հեզահամբոյր:

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
 Եթէ նոյնիսկ խօսող-խնդացողի վառվառն բնաւորութիւն չունիք, ճիշդ մը ըրեք, դուք ձեզի ստիպեցեք միանալու նոր մարդոց, մտերմանալու անոնց, նաեւ փոխանակեցեք հասցէ կամ հեռաձայնի թիւ: Մարդամօտ եղեք:

ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերէն 23 Նոյեմբեր)
 Այսօր քիչ մը դրամ պիտի ծախսեք ակամայ, մանաւանդ եթէ ունիք փոքր գումարներ՝ պիտի ստիպուիք անոնց քմայքները գոհացնել, գնելով խաղալիք կամ այլ կարգի հանոյք պատճառող առարկաներ:

ԿՐԻԻՃ (24 Նոյեմբերէն 23 Դեկտեմբեր)
 Մակամիտ մի ըլլաք, ոչ ալ քմայքոտ, որպէսզի ձեր շուրջիները ձեզմէ չհեռանան: Ընդհակառակը, եղեք լրջախոն եւ ականջ տուեք ձեր մեծերուն խրատներուն:

ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
 Փոքր հարցերը լեռներու մի վերածեք, դուք որ յաջողած էք շրջանցել արգելքները, որոնք այնքան մտահոգի էին: Մի ընկրկիք մանր-մուկը հարցերու դիմաց:

ԱՅԾԵՂՋԻԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
 Հարցերը քիչ մը կրնան բարդանալ այսօր, բայց մտահոգութիւնը կարիք չկայ, ջանացեք հանդարտութեամբ դիմակայել օրուան խնդիրները, անոնց յարմար լուծում մը որոնելով:

ԾՈՎԱՆՆՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)
 Եթէ ձեր դիմաց աշխատանքի դաշտը բաց մնայ, մի շահագործեք կամ գուր ժամանակ մի վատնեք: Մանաւանդ եթէ հարցը կը վերաբերի ձեր ասպարէզին: Մարդիկ կ'ուզեն ձեզ փորձել:

ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)
 Սպասումներ եւ ակնկալութիւններ ունիք յառաջիկայ օրերուն համար, մանաւանդ եթէ ուսանող եք եւ կը սպասեք պաշտօն մը ստանձնել: Համբերեցեք:

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՍՕՐ / ՅՈՒՅԱՀԱՆԿԵԿ / ԶՐՈՍԱԵՐՉՈՒԹԻՒՆ

ՏԵՅՐ ԷԼ ՔԱՄԱՐԻ ՓԱՌԱՍՕՐԸ՝ ԼԻԲԱՆԱՆՅԻ ԵՒ ՕՏԱՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՐՈՒԵՍԱԳԵՆԵՐՈՒ ԹԱՏԵՐԱԲԵՄԸ

Լիբանանեան աստղաչարհ երկինքին տակ տասը կախարդական եւ անմոռանալի շաբաթվերջեր խոստացող Տէյր Էլ Քամարի ամառնային փառատօնը յառաջիկայ օրերուն եւս պիտի շարունակէ մատուցել մշակութային այլազան նախաձեռնութիւններ: Ի տարբերութիւն լիբանանեան այլ փառատօնեան, Տէյր Էլ Քամարի փառատօնը իր յայտագիրներուն մէջ կարեւոր տեղ կու տայ լիբանանեան եւ օտար ժողովրդական, ինչպէս նաեւ՝ արտաքին խոստացող լիբանանեան եւ օտար ժողովրդական մակարդակի խոստերու: Այս ծիրէն ներս վաղը՝ Հինգշաբթի, 7 Օգոստոսի երեկոյեան ժամը 8:00ին, Տէյր Էլ Քամարի Սերային մէջ տեղի պիտի ունենայ ուսանողական «Թուօն անսամպլ» թատերախաղը՝ բեմադրութեամբ Լայալ Ղանամի եւ Նամէթ Ժրէյժի: Արաբերէն լեզուով այս թատերախաղը, որուն մէջ դեր ստանձնած են նաեւ անոր երիտասարդ բեմադրիչները, թատերական պատշաճեցումն է ուսանողական գրագէտ Մնքա Վիսաւի ինքնակենսագրական մէկ վէպի: Ուրբաթ, 8 Օգոստոսի երեկոյեան ժամը 9:00ին, Սընշիէի մէջ էլոյթ պիտի ունենայ իտալացի երաժիշտնու «Թարանթա Փաուզը» խումբը: Անոր էլոյթին պիտի յաջորդէ իտալական խոհանոցի նուիրուած երեկոյ մը: Շաբաթ, 9 Օգոստոսի երեկոյն պիտի ունենայ արաբական դիմագիծ: «Ուսահապիաթ» խորագրեալ այս երգահանդէսին ուսող էլոյթ պիտի ունենան Չիատ Սահապայ Էլի Ռըպալլա, իսկ թմբուկով՝ Սիմէտ Ալ Խաթիպ: «Ուսահապիաթ» տեղի պիտի ունենայ երեկոյեան ժամը 8:30ին, Քայսարիէի Ֆրանսական Մշակութային կեդրոնին մէջ:

ԱՅՍՕՐ

«Պարային Գերկայացում» «Կրացիա տը Մատրիս», գիշերուան ժամը 10:00ին, Քազիմօ Տիւ Լիպանի «Մալ տե Գ՝Ամպաստետօր» սրահ, մինչեւ 27 Օգոստոս:

Յուցահանդէս՝ Ռաշանայի Քանդակագործութեան Միջազգային Ֆորում, մինչեւ 9 Օգոստոս:

Հայերէն Այբուբենի նուիրուած ցուցահանդէս «Ապրող եւ պրեցնող», Մանուկ Հոփալեանի գործերը, «Վարուծան Արք Սենթըր»-ի մէջ, մինչեւ 7 Օգոստոս:

Նկարչական ցուցահանդէս «Նուվօ Թալան», Սիւրիա Քարամի եւ Նայա Թապափի գործերը, «Ֆընել» ցուցարան, մինչեւ 21 Սեպտեմբեր:

Նկարչական հաւաքական ցուցահանդէս, «Ժահին Ռուպէլ» ցուցարան, մինչեւ 22 Օգոստոս:

Արկածախնդրական խաղերու փառատօն՝ «Եքսքրիմ Էտվենչըր Փարք» ՊիէԷ, մինչեւ Երեսուրի վերջը:

ԱԶԳԱԿ 50 ՏՆՄԻՒ ԿՄ-ԱՋ
 6 Օգոստոս 1953

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՋ ՄԸ ԿԱՐԵՒՈՐ ԿՏԱԿԸ

Պոսթընէն կը գրեն «Հայրենիք»-ին. Միացեալ Նահանգներու մեր ընկերներէն տեք եւ տիկին Փայլածու Չափութեաններ իրենց խոր գիտակցութեամբ եւ առողջ տրամաբանութեամբ ընդառաջելով կտակի առողջ եւ շինարար նպատակին, իրենց երկարակնիքը քարոզէն շէնքը, -մորթիէյ-ճէ - կը կտակեն Զ. Յ. Ռ. Պրոքլինի «Վոսմեան» Կոմիտէի միջոցով, Հ. Յ. Ռ. Ամերիկայի կեդրոնական Կոմիտէին, Պոսթըն: Կտակի պաշտօնական եւ օրինական ձեւակերպութիւնները ստորագրութեանց 30 Նոյեմբեր 1953, Պրոքլինի մէջ, իրաւաբան Պերն Պոլոսեանի - կոմիտէի անդամ ընկ. Միսաք Պոլոսեանի որդին - միջոցով եւ վկայութեամբ ընկերներ Ղազար Պոլսեանի եւ Արամ Տէր Մեսրոպեանի:

Չափութեան գոյգը իր կտակագիրի միջոցով կ'ընէ հետեւեալ նուիրատուութիւնները ազգային հաստատութիւններու, հնչուն գումարներով:

Նիւ Եորքի Ս. Լուսաւորիչ Մայր եկեղեցիին՝ 227 Իսթ 27րդ փողոց, 1000 տոլար:

Սեբաստիոյ Հայր. Միութեան Կեդր. վարչութեան՝ 1000 տոլար:

Հ.Օ.Միութեան՝ 1000 տոլար:

Հայկ. Գարեհ. Եփփէ Գեմարանին՝ 1000 տոլար:

Պէշրուօի Փայլածու Գեմարանին՝ 1000 տոլար:

Լիբանանի Ազուրի Կրթական-Գոյնի 500 տոլար:

Հայաստան Քեմփին՝ 500 տոլար, հոն իրենց անուանի նուիրուած տարաբան մը շինութեան նպատակով: Պաշակցութեան կտակուած շէնքին - 1073 Նիւ Եորք Էվընիլ, Պրոքլին, - Գեքընայարկը, տասը տարուան պայմանաժամով օրինաբար ստորագրած են, «Վոսմեան» Կոմիտէին տրամադրելով ձրի, որպէս ժողովատեղի գործածութիւն համար:

Իրենց պահեստի գումարէն հաւասարապէս բաժին կը հանեն այր եւ կնոջ 9ը ազգականներուն: Տասներորդը Կոմիտէի նշանակած են:

Այս գնահատելի կտակի յօդու է իրենց երկուքին մահէն յետոյ:



Ընկեր եւ ընկերուհի Չափութեաններ անգամակ են: Տիկինը միշտ տանտիկին մնացած է. անգամ է Պրոքլինի Հ.Օ.Միութեան մասնակցութիւն երկար տարիներ ի վեր: Սրտբացօրէն եւ անխոնջ կերպով կ'աշխատի մասնակցութիւն ձեռնարկներուն, գոհաբերելով թէ՛ նիւթապէս եւ թէ՛ բարոյապէս:

Ընկ. Նշան միշտ եղած է եւ կը մնայ շաբաթ աշխատանք տարիներ ի վեր. իր արդար վաստակով ձեռք բերած այսօրուան բարօր վիճակը արդիւնք է իր սեւ աշխատանքին: Կոմիտէի համեստ ընկերներէն է: Խոնարհ ընկեր մը, որ մերժում բառը չունի իր բառագիրքին մէջ: Կը մանակցի ձեռնարկներուն աշխատանքով ու հիւրանակ եւ բարոյական գոհողութիւններով:

ԱՅՍՕՐ՝ 6 ՕԳՈՍՏՈՍ

■1974 - Մահ Լեւոն Զաղոյեանի (Լեւոն փաշա), Վասպուրականի կռիւներու ղեկավարներէն:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Ր Հ



ՏՈՍԻ ՓՈԽ ՏՐՈՒԵՑԱԻ ԼԻԾԻ

Փարիզ ՍԵՆ Ժերմենի մարզիկ Տիտիկ Տոմի երեկ մեկ տարուան համար փոխ տրուեցաւ Լիծի, յա յ տ ն է ց ի ն ա ն գ ի խ կ ա ն ա կ ու մ ք ի ն պ ա տ ա ս ի ա ն ա տ ու ն եր ր: 25 տարեկան Տոմի, որ երեկ ենթարկուեցաւ բժշկական քննութիւններու պիտի փորձէ օժանդակել իր խումբին, որ անցեալ եղանակի նման դարձեալ Ա. դանակարգ փոխադրուելու վտանգին տակ չըլլայ:



Տոմի

Լիծի մարզիչ Փիթեր Ռիտ, այսպիսով ամրան ընթացքին իր կազմին կը միացնէ երրորդ մարզիկը, ճոտի Մորիսէն եւ ֆրանսացի Չուսմանա Քամարայէն ետք: Նշենք, թէ նախապէս Տոմի մաս կազմած է Նիքէլի:

Կակնկալուի, որ Լիծի միացող չորրորդ մարզիկը ըլլայ աստրալիացի յառաջապահ Մարք Վիտուրա:

● ՄԱՐՍԵՅԻ պատասխանատուները երեկ յայտնեցին, թէ շատ հաւանաբար իրենց կազմին միացնեն սենեկալի յետապահ Հապիպ Պելէն, որ մաս կը կազմէ Սթրասպուրի:

25 տարեկան Պելէ, Սթրասպուրի միացաւ 1998ին եւ անոր հետ դաշտ ներկայացաւ 114 մրցումի ընթացքին:

Թեմի այդ ուղղութեամբ Մարսէյ այժմ մեծ աշխատանք կը տանի, սակայն Սթրասպուրի նախագահ Էլոն Կիտորֆ կը փորձէ անոր պայմանագրութիւնը երկարաձգել, նկատի ունենալով, որ այս եղանակի ւարտին ան կրնայ հեռանալ իր ակումբէն, որովհետեւ անոր պայմանագրութիւնը կ'աւարտի 2003 - 2004 եղանակին:

ՍԻՊԻԵՐՍՔԻ ՄԻԱՅՄԱԻ ՄԱՆՉԵՍԹԸՐ ՍԻԹԻԻ

Լանսի միջնապահ Անթոնի Սիպիերսի երեկ ի վերջոյ ստորագրեց Մանչեսթըր Սիթիի տոմարներուն վրայ, յայտնեցին ֆրանսական ակումբին պատասխանատուները:



Սիպիերսի

Անցեալ շաբաթ վերջին, Լանս մերժեց ընդունիլ այդ ուղղութեամբ անգլիական կազմին կատարած յայտարարութիւնը, թէ միեւնոյն ժամանակ Սիթիի մարզիչ Քեւին Բիլկըն այդ մէկը պաշտօնապէս յայտարարեց:

Ըստ Բիլկընի երեք տարուան պայմանագրութիւն ստորագրած Սիպիերսիի փոխանցումը արժեք մեկ միլիոն ամերիկեան տոլար:

Վերջին երեք եղանակներուն Լանսի շապիկը կրած Սիպիերսի նախապէս մաս կազմած է Նաեյ Օքսֆորդի:

● ՍԱՌԻԹՆԵՐՔԻ պատասխանատուները երեկ յայտնեցին, թէ ամբողջացուցին Ռեյնոլդսի մարզիկ Նիլ Մաքսի փոխանցումը, անոր համար վճարելով մէկուկէ միլիոն փաունտ:

Կակնկալուի, որ Սաութհեմթըրն իր կազմին միացնէ նաեւ Սանտրլիէնտի յառաջապահ Քեւին Ֆիլիպսը:

ԱՐՍԵՆԱԿ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԻ «ՃՐԱՆՍԱԿԱՆԱՆԱԿ»

Արսենալի պատասխանատուները յայտնեցին, թէ իրենց կազմին միացուցին ֆրանսացի երիտասարդ յետապահ Կաէլ Քիլշին (18 տարեկան) անոր փոխանցման համար Քանսի վճարելով 400 հազար ամերիկեան տոլար:

Լոնտոնեան կազմին մարզիչ Արսեն Վենկեր կ'ըսէ, թէ Քիլշի, որ այսպիսով պիտի ստանան է՛21ի Քոլի պաշտօնը:

Ան այսպիսով կը դառնայ երկրորդ մարզիկը, որ կը միանայ Արսենալի: Նախապէս (ամրան ընթացքին) Վենկերի կազմին միացած առաջին մարզիկը հանդիսացաւ բերդապահ Են Լեման, որ Պորուսիա Տորթնուտէն, փոխան 1,5 միլիոն ամերիկեան տոլարի միացաւ Արսենալի:

«ՉԵՄՓԻԸՆԶ ԼԻԿ». ՉՏՈՒՄԻ ՄՐՅԱՇԱՐԲ

Փիլիսիկ ԱՅՍՕՐ ԴՇՈՒԱՐ ՄՐՅՈՒՄ ՍԸ ՈՒՆԻ ՍՈՖԻԱՅԻ ՍԷՋ

«ՉԵՄՓԻԸՆԿ ԼԻԿ»-ի պտուծի մրցաշարքին Բ. հանգրուանի դարձի մրցումներուն, այսօր տեղի կ'ունենան 14 ճակատումներ, որոնց ընթացքին նաեւ մրցում ունի կատարելիք Հայաստանի ներկայացուցիչը՝ Փիլիսիկ Երեւան, որ Սոֆիայի մէջ պիտի ճակատի Սոֆիայի Բանակայիններուն դէմ (Պուլկարիա):

Հակառակ անոր որ երթին Երեւանի մէջ Փիլիսիկ 2-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց պուլկարական կազմէն, սակայն հայկական կազմին ռուսականացի մարզիչ Միհայ Սթոյքո կը վստահեցնէ, որ իր կազմը մինչեւ մրցումին ասարտը պիտի պայքարի եւ ոչ մէկ ճիգ պիտի ինչայէ ապահովելու համար Գ. հանգրուանին իր տոմար: Յաջորդ հանգրուան հասնելու պարագային Փիլիսիկի մրցակիցը պիտի ըլլայ Կալաթասարայ:

Երթի մրցումներուն ամէնէն հանգիստ յաղթանակը արձանագրած Սելթիք (4-0), պիտի հիւրընկալէ Քաունասը (Լիթվանիա):

Սկովտիական կազմին մարզիչ Մարթին Օնիլ, երեկ ըսաւ, թէ դաշտ պիտի չներկայացնէ Հենրիք Լարսընը, որպէսզի ան լուսապէս ապաքինի (թեթելօրէն վիրաւոր): Սակայն անոր կազմէն դաշտ պիտի ներկայանայ Քրիս Սաթըն (նախապէս վիրաւոր):

Փարթիկան Պելլարտի (Սերպիա) մարզիչ՝ Լոթար Մաթէուս, Միուրկարտընսի դէմ (Շուէտ) տեղի ունենալիք մրցումին նախօրեակին վստահեցուց, որ իր կազմը պիտի անցնի յաջորդ հանգրուանը:

հակառակ անոր որ երթի մրցումը վերջ գտաւ հաւասարութեամբ (1-1):

Երթի մրցումներուն բաւական հանգիստ յաղթանակներ արձանագրեցին Կրաց (Աւստրիա), Վիսլա Բրաքով (Լեհաստան) եւ Ֆ. Բ. Քոփենհակըն (Դանիա):

Ստորեւ՝ դարձի մրցումներուն յայտագիրը (նշուած արդիւնքները՝ երթի մրցումներուն արդիւնքներն են):

- Մաքապի Թէլ Աւի (Իսրայէլ) – Չիլիխա (Սլով.) 0-1
- Վարտար (Մակեդոնիա) – Մոսկուայի Բանակայիններ (Ռուսիա) 2-1
- Շախթար Տոնէթցք (Ուքրանիա) – Շերիֆ Թիրասուլ (Մոլտովիա) 0-0
- Հելսինքի (Ֆինլանդիա) – Պուտափէշթ (Հունգարիա) 1-3
- Սլաւիա Փրակա (Չեխիա) – Լէոքար Թրեպիսիէ (Ալպանիա) 2-1
- Օմնիս (Կիպրոս) – Վիսլա Բրաքով (Լեհաստան) 2-5
- Ռոպենպորկ (Նորվեգիա) – Պոհեմիանս (Այիր) 1-0
- Սոֆիայի Բանակայիններ (Պուլկարիա) – Փիլիսիկ Երեւան (Հայաստան) 2-0
- Կրաց (Աւստրիա) – Թիրանա (Ալպանիա) 5-1
- Անտրլիքթ (Պէլճիք) – Ռափիտ Պուքրէշ (Ռումանիա) 0-0
- Տիրուկարտըն (Շուէտ) – Փարթիկան Պելլարտ (Սերպիա) 1-1
- Սլիեմա Ռանտրըրը (Մալթա) – Քոփենհակըն (Դանիա) 1-4
- Տինամօ Չադըէպ (Իտալիա) – Մարիպոր (Սլովաքիա) 1-1
- Սելթիք (Սկոտլանդ) – Քաունաս (Լիթվանիա) 4-0

ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● ՓԱՐԻՋԻ մէջ (Ֆրանսա) անցեալ շաբաթ վերջին ասարտած ամառնային Ողիմպիականի մրցումներուն, Հայաստանի չորս մասնակցողներէն մէկը միայն՝ Անուշ Յակոբեան յաջողեցաւ տրոնկ մեդալի մը փիրանալ, աղքակն ճիւղոյի 53 քկ. դասակարգին մէջ: Հայաստանի չորս ներկայացուցիչները իրենց մասնակցութիւնը բերին չորս ցարքեր փեսակի մրցումներու:

● ԼԻԹՎԱՆԻԱՅ Քաունաս քաղաքին մէջ տեղի ունեցող Եւրոպայի յայտանիներու բնօրհանարարի մրցումներուն, հայրենի բնօրհանարարի Տիգրան Գէորգեան երկու յաղթանակ արձանագրելով առաջինը կիսաարքայական հանգրուանին իր ցումը, այսօր յաջող առնուազն տրոնկ մեդալի մը փիրանալու յոյս ունենալով:

ՄԱՔԱՅ ՄԻԱՅՄԱԻ ՊԱՅԵՐՆԻ

Տեփոթիօ Քորունայի մաս կազմող հոլանտացի յառաջապահ Ռոյ Մաքայ, երեկ իր ֆուլպուլիստի ասպարէզին մէջ նոր էջ մը բացաւ, որովհետեւ ակումբը լքելով միացաւ Պայէրն Միւնխիխ, որուն հետ պիտի ստորագրէ չորս տարուան պայմանագրութիւն մը՝ բժշկական քննութիւններու ենթարկուելէ ետք:



Ռոյ Մաքայ

«Շատ ուրախ եմ, որ կը միանամ Պայէրն Միւնխիխ, նկատի ունենալով որ երկար ժամանակ ի վեր կը փափաքէի մաս կազմել անոր», ըսաւ 28-տարեկան հոլանտացին, որ անցեալ եղանակին Սպանիոյ ախոյեանութեան մրցումներուն նշանակեց 28 կոլ:

Անոր փոխանցման համար 22,5 միլիոն ամերիկեան տոլար վճարած, Պայէրն Միւնխիխ իր ամէն կարելին պիտի ընէ «ՉԵՄՓԻԸՆԿ ԼԻԿ»-ի մրցումներուն լաւ արդիւնք արձանագրել, նկատի ունենալով որ Պուլտուրիկային գծով անիկա աղքան ալ դժուարութիւններ չ'ունենար:

Այսպիսով, Պայէրն Միւնխիխ կը դառնայ Մաքայի չորրորդ ակումբը՝ անոր ֆուլպուլիստի ասպարէզը սկսելէն ի վեր: 18 տարեկանին, ան առաջին անգամ ըլլալով իբրեւ արհեստավարժ ֆուլպուլիստ դաշտ ներկայացաւ Վիթէս Անիլեմի հետ (Հոլանտա), 109 մրցումի ընթացքին նշանակելով 49 կոլ: 1997ին ան միացաւ Թենթերֆէի, ապա երկու տարի ետք մաս կազմեց Տեփոթիօ Քորունայի, անոր հետ 130 մրցումի ընթացքին նշանակելով 76 կոլ:

1996ին, առաջին անգամ ըլլալով Հոլանտայի ֆուլպուլի ակումբի խումբին շապիկը կրած Մաքայ, «ՉԵՄՓԻԸՆԿ ԼԻԿ»-ի ֆուլպուլի մրցաշարքին 30 մրցումի ընթացքին նշանակած է 11 կոլ:

ՊԵՔՆԱՄ ՆՇԱՆԱԿԵՑ ԻՐ ԱՌԱՋԻՆ ԿՈԼԸ ՌԷՍԼ ՄԱՏՐԻՏԻ ՀԵՏ



Մանչեսթըր Եունայթըտէն Ռեյալ Մատրիտի միացած անգլիացի միջազգային միջնապահ Տէյվիտ Պեքամ երեկ Թոթիոյի մէջ (Ճափոն) նշանակեց իր առաջին կոլը, երբ անոր կազմը ֆուլպուլի բարեկամական մրցումի մը ընթացքին 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Ֆ. Բ. Թոթիոն, որ մաս կը կազմէ Ճափոնի Ա. դասակարգի խումբերուն:

Պեքամ Ռեյալի հետ իր առաջին կոլը նշանակեց 37րդ վայրկեանին՝ ապա հարուածէ մը ետք: Մրցումին երկրորդ կոլը նշանակեց Սանթիակօ: Մուարի (44րդ), իսկ երրորդ կոլը՝ Ռոնալտո (88րդ):

Մրցումին ներկայ էին աւելի քան 54 հազար համակիրներ, ինչպէս նաեւ շուրջ երկու հարիւր ոստիկաններ եւ ապահովութեան հսկող 800 անձնակազմի պահակներ:

Ռեյալի կազմէն կը բացակայէր ֆրանսացի միջնապահ Չիլետին Չիտան, թեթելօրէն վիրաւորուած ըլլալով:

Ռաուլ Կոնցալես, որ խումբին խմբապետն էր, մրցումէն ետք ըսաւ, թէ մեր ամէն կարելին կ'ընենք իւրաքանչիւր մրցումի ընթացքին լաւ արդիւնք արձանագրելու համար եւ լուսապէս պատրաստուելու յառաջիկայ Օգոստոս 24ին Մայրքայի դէմ տեղի ունենալիք Սպանիոյ գերբաժակի մրցումին:

Նշենք, թէ Ռեյալ Մատրիտ շարունակելով ասիական երկիրներ իր շրջապտոյտը, ֆուլպուլի բարեկամական մրցումներ պիտի կատարէ նաեւ Հոնկ Բոնկի եւ Պանքոքի մէջ:

ՀԱՌԻԸՐՏ, ԹԷ ՊԱՐԹԷՋ

Ամերիկացի բերդապահ Թեմ Հաուրըտ, թէեւ լաւ ձեռով սկսաւ իր պաշտօնին, իր նոր ակումբին Մանչեսթըր Եունայթըտի հետ, սակայն մարզիչ Ալէքս Ֆերկլըն երկը ըսաւ, թէ ամբողջութեամբ արլ կանց չէրրած ֆրանսացի իր բերդապահը Ճապիէն Պարթէպը, նկատի ունենալով որ ան բացառիկ յատկութիւններով օժտուած ըլլալուն պատճառով, դուրս չի կրնար դուրսի հիմնական կազմէն:



Պարթեպ

Հակառակ անոր որ Հաուրըտի փոխանցման համար Եունայթըտ անոր ակումբին Նի Ճըրլի Մեթրոսթարպիս վճարեց 3,5 միլիոն ամերիկեան տոլար, սակայն Պարթէպ յոյս ունի վերստին ստանձնելու իր պաշտօնը, հակառակ անոր որ Ֆերկլընի իսկ հաստատումով Պարթէպ անցեալ եղանակի ասարտին նախանջ արձանագրեց:

ՏԱԻՏԾ ՊԻՏԻ ՀԵՌԱՆԱՅ ԵՌԻՎԷՆ


Եւրոպայի պատասխանատուները երեկ յայտնեցին, թէ հոլանտացի միջնապահ Էտկար Տաիտծ շատ հաւանաբար կ'անցնայ խումբին, հակառակ անոր որ անոր պայմանագրութիւնը կ'աւարտի յառաջիկայ Յունիս 2004ին:

Վերջին երեք տարիներուն Եւրոպի շապիկը կրած Տաիտծ, տակաւին կը յամենայ իր պայմանագրութիւնը երկարաձգել, հակառակ անոր որ խումբին պատասխանատուները անոր իր յոյս է մատուցել «իրաւունք» են:

Ակումբին պատասխանատուները ամէն գնով կ'ուզեն իմանալ, թէ ան որքանով պիտի մնայ իրենց հետ, նկատի ունենալով որ Եւրոպի ակազայի իր հեռանկարները ունենալով կ'ուզեն այժմէն իսկ տարբեր տեսակի դասաւորումներ կատարել իր կազմին ներս:

Նշենք, թէ ներկայիս Տաիտծով հետաքրքրուած են Չելսի եւ Պարսելոնա:

ԻՆՏՈՆԵՉԻՈՅ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ՄԵՉ ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ՊԱՅԹՈՒՄ



Ինտոնեչիոյ մայրաքաղաք Ճաքարթայի մէջ երէկ առնուապ 13 Կոհ եւ 149 վիրաւոր արձանագրուեցաւ, երբ 33 յարկանի «Մարիոթ» պանդոկը թիրախ դարձաւ ականուած ինքնաշարժի մը պայթուիմին, որ ըստ ոստիկանութեան նման էր անցեալ տարուան Պալիի ահաբեկչական յարձակումին:

Կէսօրին տեղի ունեցած պայթումը քանդած է ճաշարան մը եւ հինգ աստղանի պանդոկին մուտքը, վնասելով օտար քանի մը դէսպանատուներու տուն տուող մօտակալ շէնքեր:

Պայթումը տեղի կ'ունենար մինչ ատեն մը կը պատրաստուէր երկու օրէն իր առաջին վճիռը արձակելու՝ մեծամասնութեամբ օտար 202 Կոհ խառն Պալիի յարձակումին յանցանքով ամբաստանուած ձեռնա Իսլամիա խմբակին անդամներու դատավարութեան մէջ:

Ինտոնեչիոյ պաշտպանութեան նախարար Մարթրի Ապտիլ ձալի յայտնած է, թէ տակաւին շատ կանխահաս է «Քալիտա» ցանցին հետ կապեր ունեցող ձեռնա Իսլամիա խմբակը ամբաստանելու համար, սակայն մեկնաբաններու համաձայն յարձակումը այդ խմբակին «կնիքը» կը կրէ, իսկ ոստիկանութեան համաձայն՝ Պալիի հետ նմանութիւններ կան:

Երկրին գլխաւոր ոստիկանապետը Տայ Պալիթար թղթակիցներու յայտնած է, թէ ռուսները պահուած էր երկրին մէջ շինուած Թոյթա «Քիճանկ» վանքի մը մէջ, սակայն հակառակ անոր մօտ մարդկային մարմնի մասերու ներկայութեան, տակաւին յայտնի չէ, թէ տեղի ունեցածը անձնասպանական գործողութիւն էր: Ոստիկանութիւնը ըսած է, թէ առնուապ 3 օտարահպատակներ՝ ամերիկացի մը, աստրալիացի մը եւ մալեզիացի մը, սպանուած են, սակայն ամերիկեան եւ աստրալիական դէսպանատուները հերքած են, թէ իրենց քաղաքացիներէն ոեւէ Կոհ արձանագրուած է:

Պանդոկը, որ ինտոնեչիացիներու կը պատկանի, սակայն ամերիկեան «Մարիոթ Ինթըրնէշնըլ» խմբակը կը կրէր անոր աշխատանքներով, ձաքարթայի ամերիկեան համայնքին բազմաթիւ հանդիսութիւններ հիւրընկալած է:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԶՈՒՇԱՅՈՒՄ

Մ. Նահանգներ անցեալ շաբաթ արտասահման գտնուող ամերիկացիներուն ընդհանրական ահաբեկչութեան վերաբերեալ նոր կողմաշույն ակտարած էին:

Ուաշինկթըն երէկ շտապ կերպով դարձեալ կոչ ուղղեց Ինտոնեչիոյ մէջ ընկնող ամերիկացիներուն, որ անձնական ապահովութեան աւելի խիստ միջոցառումներու դիմեն:

Ճաքարթայի մէջ ամերիկեան դէսպանատուները գրուեան մը մէջ նաեւ յայտնած է, թէ ամերիկացի պաշտօնատարներու կարծիքով, Ինտոնեչիոյ մէջ ապահովական ներկայ անորոշ վիճակը պիտի շարունակուի «մօտիկ ապագային»:

Ինտոնեչիոյ փոխ նախագահ Համպա Հապ ըսած է, թէ ոմբահարումին թիրախը կրնայ երկրին մէջ ամերիկեան շահերուն վնաս հասցնել ըլլալ:

Իսկ ապահովութեան հարցերու նախարար Սուսիօ Պամպանկ Եուտիոյնո յայտարարած է, թէ կառավարութիւնը բնաւ տեղի պիտի չտայ ահաբեկչներուն առջեւ, աւելցնելով, որ կառավարութիւնը Չորեքշաբթի օր (այսօր) ապահովութեան վերաբերեալ նոր քաղաքականութիւն մը պիտի բացայայտէ՝ յաղթահարելու եւ կանխարգիլելու համար ահաբեկչութիւնը:

Աստրալիա, Ֆիլիպիններ եւ Մալեզիա եղած են առաջին երկիրները, որոնք դատաւարտած են երկկուսն յարձակումը:

ՊԵԼԿՐԱՏԷՆ ԴԱՏԱԽԱԶ ՄԸ ԼԱ ՀԷՅ ՄԵԿՆԵՑԱԻ՝ ՀԱՐՑԱՔՆ ՆԵԼՈՒ ՄԻԼՈՇԵԻԻՉԸ

Պելկրատէն դատախազ մը երէկ Լա Հէյ մեկնեցաւ՝ հարցաքննելու Եուկոսլաւիոյ նախկին նախագահ Սլոպոտան Միլոշեւիչը, որ Յունուար 2001էն ի վեր բանտարկուած է համանուն քաղաքի յատուկ բանտին մէջ: Դատախազը պիտի հարցաքննէ միայն մէկ հարցով՝ սերպ նախկին նախագահ Իվան Սթամպոլիչի սպանութեան գծով: Միլոշեւիչ ամբաստանուած է այն ոճիւրին իբրեւ պատասխանատուն: Սթամպոլիչ առեւանգուած ապա սպաննուած էր անձանթներու կողմէ:

ՓՈՐՐԹՈՒԳԱԼ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԿԸ ԽՆԴՐԷ ՕԹԱՆԷՆ՝ ԱՂԻՏԱԼԻ ԸՐԴԵՆԵՐՈՒՆ ԴԷՍ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԸԱՄԱՐ



Փորթուգալ երէկ յայտարարած է, թէ ՕԹԱՆԻ օժանդակութեան դիմած է՝ օղա-

ԽԱԹԵՄԻ ՄՏԱՀՈՂ՝ ԻՐԱՆԻ ՄԷՉ «ՃԱՇԱԿԱՆՈՒԹԵԱՆ» ՏԱՐԱԾՈՒՄՈՎ

ԹԵՎՐԱՆ, 5 (ԱՅՓ).- Իրանի նախագահ Մոհամէտ Խաթեմի մտահոգութիւն յայտնած է Իրանի մէջ «Ֆաշականութեան» տարածումին մասին, խիստ արտայայտութիւններով յարձակողականի մը դիմելով՝ բարեկարգչական իր քաղաքականութիւնը ձախողութեան մատնել փորձող կողմերուն դէմ:

Մամլոյ տեղեկութիւններու համաձայն, Խաթեմի կառավարութիւնը Խորհրդարանի միացեալ ժողովի մը ընթացքին շեշտած է, որ իսլամական յեղափոխութեան նպատակը «Ֆաշական տեսլականի մը ստեղծումը չէ ընկերութեան մէջ, ոչ այլ յարձակիլ եւ ճնշում բանեցնել անոնց վրայ, որոնք այդ տեսլականը չեն բաժնէր»:

Ան ընդգծած է, որ իսլամութիւնը, անկախութիւնը եւ պատմութիւնը պաշտպանելու միակ ձեւը «կրօնը եւ ազատութիւն միացնել» է:

Միւս կողմէ, Իրանի հոգեւոր գերագոյն պետ Այաթոլլա Ալի Խամենէի ատենանշումն կոչ ուղղած է «ներողամտութիւն» ցուցաբերելու Յունիսի եւ Յուլիսի ցոյցերուն ընթացքին ձեռքալայնուած տասնեակներով ուսանողներու հանդէպ:

Մինչ այդ, պահպանողական «Ապրար» օրաթերթին համաձայն, Շիրապի մէջ տեղի ունեցած ցոյցերուն ձեռքալայնուած 2 անձեր յանցարար նկատուած են «Աստուծոյ դէմ պատերազմելու» յանցանքով:

նաւեր եւ ուղղաթիռներ հայթայթելու համար, որպէսզի կարենայ շարունակել իր պայքարը՝ հսկայ, աղէտալի հրդեհներուն դէմ, որոնք արդէն 11 Կոհ խառն են:

Կառավարութիւնը Երկուշաբթի օր ազգային աղէտի վիճակ հռչակած է, մինչ չափազանց բարձր ջերմաստիճաններ եւ ուժեղ հովեր թափ կուտային կեդրոնական եւ հարաւային Փորթուգալի մէջ աւելի քան շաբաթ մը առջ ծայր տուած հրդեհներուն:

Հրդեհները քանդած են հազարաւոր հեքթարներով անտառներ եւ տասնեակներով տուներ: Սպանիա նոյնպէս աղէտալի հրդեհներ կը դիմագրաւէ: Երէկ Փորթուգալի մօտակալ հարաւային Էսթրեմա-

տուրա նահանգին մէկ գիւղին ամբողջ բնակիչները՝ 800 հոգի, հեռացած են իրենց տուներէն, մինչ հրդեհները կը մօտենային անոնց:

Շրջանին մէջ ջերմաստիճանները անցած են 40 աստիճան սելսիուսը:

Իտալական Ժենովա քաղաքին մօտակալ անտառները երէկ հրդեհներ դիմագրաւած են, մինչ Իտալիա կը պայքարէր հետզհետէ աւելի բարձրացող ջերմաստիճաններու հետեւանքներուն դէմ:

Սլովենիա 100 տարւան ամէնէն տաք ամառը կը դիմագրաւէ, ըսած են երէկ օրերու տեղաբանները:

Գերմանիա, Յրանսա, Բրիտանիա, Խրուաթիա նոյնպէս չափազանց բարձր ջերմաստիճաններ կը դիմագրաւեն:

ՓՈՒԹԻՆ 900 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԵԱՆ ԴԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ ԳՈՅԱՅՈՒՅ ՄԱԼԵԶԻՈՅ ՄԵՉ



Վարչապետ Մահաթիր Մոհամէտ կը դիմաւորէ Փուլիմը

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին երէկ Մալեզիոյ մայրաքաղաք Քուալա Լամպուրի մէջ տեսակցութիւններ ունեցաւ երկրին ղեկավարութեան եւ թագաւորական դատուն հետ, որոնց ընթացքին ան համաձայնութիւն մը գոյացուց 900 միլիոն տոլարի պինտորական սարքեր վաճառելու Մալեզիոյ: Մինչեւ երկու տարի, Քուալա Լամպուր պիտի ստանայ ռուսական «Սուխոյ» տիպի արդիական 18 օդանաւեր:

ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

● ԲՈՒՍԱՆ ԼՈՒՄՓՈՒՐ.- Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին երէկ արտեց Մալեզիա իր այցելութիւնը՝ 900 միլիոն տոլար արժողութեամբ ռազմական օդանաւերու վաճառքը ապահովելէ ետք:

● ՏՈՒՍ.- Քաթարի շէյխ Համադ Պրն Խալիֆա Էմիրը երէկ իր չորրորդ որդին՝ շէյխ Թամիմը, երկրին գահաժառանգը նշանակած է:

● ՌԱՊԱԹ.- Մարոքի մայրաքաղաք Ռապաթի մէկ ատենանը բանտարկութեան վճիռ արձակած է 3 խմբագիրներու եւ իսլամական 2 արմատականներու դէմ՝ վայրագութիւն հրահրելու յանցանքով:

● ՄՈՆԵՐՈՎԻՍ.- Արեւմտեան ափրիկեան խաղաղարար ուժեր երէկ կը պատրաստուէին Լիպերիոյ մայրաքաղաք Մոնրովիա մտնել, մինչ քարեփրական գործակալութիւններ կը յայտարարէին, թէ պիտի հետեւին անոնց եւ մօտ ատենէն մայրաքաղաքին մէջ ուտեստեղէն եւ դէղ պիտի բաշխեն:

ՄԱՇՏՈՒՄ ԱՊՊԱՍ ԶՆՋԵՑ ԱՐԻԷԼ ԶԱՐՈՆԻ ԸՏԵՑ...

Շարունակուած Ա. Էջէն

դատութեանց՝ պատին շինութեան դէմ, նորաթան Միջազգային Շարժումին (Մ. Էս. Էմ.) 41 անդամներ եւ 6 իսրայէլացիներ: Կան ժամանութեամբ Կօրովիզ կը կանգնի անոր:

Չերքակայէտներու շարքին են Չօրակցութեան Միջազգային Շարժումին (Մ. Էս. Էմ.) 41 անդամներ եւ 6 իսրայէլացիներ: Կան ժամանութեամբ Կօրովիզ կը կանգնի անոր:

ցի, շուէտացի ձեռքաւայելներ: Ռուսիականութեան մէկ բանբերը յայտնած է, թէ ներքին գործոց նախարարութիւնը տեղեակ պահուած է անոնց ձեռքաւայելութեան մասին՝ անոնց իտալացի, գերմանա-

հաւանական արտաքստումի հետանկարով: Պաղեստինցիներու ու մարդկային իրաւանց խմբակներ կ'ըսեն, թէ պատին նպատակը պաղեստինեան ապագայ պետութեան մը սահմաններուն ձգողումն է:

Advertisement for AZTAG newspaper. It features the newspaper's masthead, contact information (phone numbers, fax, email, website), and a list of subscription rates for different regions (Armenia, Republic of Armenia, Georgia, Azerbaijan, etc.). The website www.aztagdaily.com is prominently displayed at the bottom.